ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Լ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ

Ականավոր բանաստեղծ, հրապարակախոս, խմբագիր և հասարակական գործիչ Վահան Թեքեյանը ծնվել է 1878 թ. հունվարի 21-ին (հին տոմարով), Կ. Պոլսի Օրթագյուղ թաղում, կեսարացի ծնողների ընտանիքում։ Օրթագյուղից Թեքեյանները տեղափոխվում են Սկյուտար, ուր անցնում է ապագա բանաստեղծի մանկությունը։ Թեքեյանը կրթությունն ստացել է Կ. Պոլսի Ներսիսյան, Պերպերյան և Կենտրոնական վարժարաններում։ Կենտրոնականի Գ դասարանից նա դուրս է գալիս և սկսում է իր աշխատանքային գործունեությունը։

1905 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում Թեքեյանը Մ. Կյուրճյանի հետ հիմնադրում է «Շիրակ» ամսագիրը, որը 1908 թ. օսմանյան սահմանադրության հռչակումից հետո տեղափոխում են Կ. Պոլիս և հրատարակում իբրև շաբաթաթերթ։ Թեքեյանը տարբեր ժամանակներ խմբագրել է «Արև», «Ժողովուրդին ձայն» թերթերը, աշխատակցել է բազմաթիվ այլ պարբերականների։ Նա ռամկավար կուսակցության գործիչներից էր։

Թեքեյանը եղել է Կ. Պոլսի, Մարսելի, Եգիպտոսի հայ դպրոցական խնամակալության անդամ, ուսուցիչ կամ տեսուչ՝ Կենտրոնական, Պերպերյան վարժարաններում, Կ. Պոլսի Նոր դպրոցում, Կեսարիո Ժառանգավորաց (1913—1914), Կիպրոսի Մելքոնյան (1934—1935) կրթական վարժարաններում։ Դասավանդել է հայոց լեզու, գրականություն և ուրիշ առարկաներ։ 1910 թ. որպես եգիպտահայության պատգամավոր, կաթողիկոսական ընտրությունների առիթով գալիս է Էջմիածին, լինում Երևանում և Թիֆլիսում։ Այստեղ նա մոտիկից ծանոթանում է արևելահայության կյանքին։ Առաջին աշխարհամարտից հետո Թեքեյանը մեծապես օգնել է որբահավաքման գործին, հոգացել որբերի աշխատանքի և կյանքի պայմանների կարգավորման մասին։

Վ. Թեքեյանը գրական ասպարեզ է իջել XIX դարի 90-ական թթ.։ Նրա առաջին ակնարկը «Կաղանդը Կեսարիո մեջ», տպագրվում է 1894 թ. Կ. Պոլսի «Հայրենիք» լրագրում, իսկ երկու ուրիշ արձակ գրվածքներ՝ 1895-ին լույս են տեսնում Ա. Զոպանյանի խմբագրած «Ծաղիկ» հանդեսում։

Թեքեյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն հրատարակվում է 1901 թ. Փարիզում «Հոգեր» խորագրով։ Դա բանաստեղծի պատանեկան կարոտի ու տենչանքների արտահայտությունն էր։ Նրանում նշմարվում է երիտասարդ բանաստեղծի ապրումների անմիջականությունը, սիմվոլիստների համար բնորոշ երաղի ու մենության տրամադրությունները.

Մութին մեջ կուզեմ, որ կյանքս անցնի,
Երազի մը պես մեղմ ու կարճատև...
Անձայն, անշշուկ, ամենին գաղտնի,
Լայն ճամփուն մեջեն քայլով մը թեթև,
Առանց ստվերիս շղթային բոնի։

Յուրօրինակ զարգացում ապրեց Թեքեյանի տաղանդը։ Ի տարբերություն հայ նշանավոր բանաստեղծների մի զգալի մասի (Մեծարենց, Տերյան և ուրիշներ), որոնց առաջին գրքերը միանգամից փառք բերեցին հեղինակներին, Թեքեյանն իր առաջին գրքով առանձին ուշադրության չարժանացավ։ «Հոգերից» հետո նա շարունակեց տպագրվել պարբերական մամուլում և 13 տարի այլևս առանձին գրքով հանդես չեկավ։

Բանաստեղծի ստեղծագործական կարելիությունները բացահայտվում են 1914 թ. Եգիպտոսում լույս տեսած նրա «Հրաշալի հարություն» գրքում։ Վերջինս երևույթ էր ոչ միայն Թեքեյանի գրական կյանքում, այլև հայ պոեզիայի համար։ Այդտեղ երևում է բանաստեղծն իր խոշոր անհատականությամբ, իրականության ընկալման իր ուրույն տեսակետով, նրբերանգներով, լույսերով ու ստվերներով։

Սիրո և մարդկայնության զգացումները բանաստեղծի այս գրքում առատորեն սփռում են իրենց ջերմությունը ոչ միայն իբրև անցյալի, այլև ներկայի ու ապագայի անգնահատելի չափանիշներ։ Այն ցավը, որ ունի հեղինակը, համամարդկային ցավ է։ Բարու և գեղեցիկի այն կորուստները, որ նրան են հատուկ՝ համամարդկային կորուստներ են։

Ի տարբերություն «Հոգերի», իր նոր գրքում Թեքեյանը հանդես է գալիս իբրև բազմակողմանի ու բարդ զգացմունքների երգիչ։ Բայց բանաստեղծական պարզությունը նրա մոտ զուգակշիռ է խորությանն ու խոհականությանը։ Մանկություն, պատանեկություն, երիտասարդություն, ծերություն,— իրենց բոլոր գունավորումներով, միջավայրով, հատկապես գեղջկական կենցաղի հրապույրներով, կյանքի մութ ու լուսավոր պահերով,— այսպիսին է բանաստեղծի աշխարհը։ Թեքեյանը նուրբ, զուսպ վրձնահարվածների վարպետ է։ Նրա ուժը մտքի և հույզի խորության, ներդաշնակության ու զուգորդման մեջ է։

Անցյալ դարավերջի ու ներկա դարի սկզբի հայ խոշոր բանաստեղծների նման Թեքեյանը ևս դժգոհ է ժամանակակից իրականությունից։ Ոչ մի լավ բան չգտնելով այդ իրականության մեջ, նա դիմում է բնությանը, սիրուն, այլ ոլորտներում փնտրում կյանքի իդեալը։ Նա խորունկ ու սուր է վերապրում սիրո անջատումը, նրա պատճառած ցավը, դրամատիկ պահեր է ունենում, երբ խոսքը վերաբերում է սիրած կնոջ անվանը.

Ինչո՞ւ անունդդ այստեղ չկարենամ գրել ես
Եվ աշխարհին չհայտնեմ, թե քեզ ինչպես սիրեցի...
Երկու վանկերը անոր կզրուցեմ գաղտնապես,
Եվ այն ամբողջ կթրվի սիրո մատյան մը ինձի...
Ինչո՞ւ անունդդ այստեղ չկարենամ գրել ես...

Սերը մարդուն վեհացնող ու պանծացնող երևույթ է բանաստեղծի պոեզիայում։ Նա չի ուզում թաքցնել, գաղտնի պահել այդ վեհ զգացումը, քանի որ այն դիտում է իբրև կյանքի մեծ հարստություն։

Բանաստեղծը փնտրում է ներդաշնակություն սիրո և բնության մեջ։ Սերը հայտնվում է նրան իր փայլով։ Նա խորապես ապրում է սիրած էակից ժամանակով ու տարածությամբ հեռու լինելու տխրությունը, կարոտի զգացումը. «Քու հիշատակդ այս գիշեր վիս լալու չափ կհուզե...»։



Բանաստեղծի համոզմամբ միայն մարդու ապրումներով ու հույզերով է իմաստավորվում բնությունը, լինի այդ աշնան տխուր պահ («Հոկտեմբեր»), թե մի ուրիշը։ Թեքեյանին ամենից շատ, իհարկե, հաջողվում է գարնան ու զարթոնքի տրամադրությունների բանաստեղծականացումը («Ապրիլ», «Գարնան հույսը», «Անտառին մեջ», «Գեղջկական» և այլն)։ Նա բնության մեջ փնտրում է բնականը և մարդկայինը։ Մարդիկ շրջապատված են բնությամբ, արևի զարթոնքի հետ բացում են դուռը։ Հարուստ ու պարզ է նրանց հոգին։ Նրանք սիրում են բնությունը։ Այդ սերը մի դեպքում («Եղերերգ») արտահայտվում է այսպես. մարդը չկա, նա հեռացել է աշխարհից, բայց նա ապրում է բնության հետ, բնության մեջ, նրա մի մասնիկն է։ Նախաստեղծ բնության փոխակերպումների հետ հառնում է գեղեցիկ այդ երիտասարդը, ապրում նրա սերը.

Թերևս սա ճաճանչն է, որ գետնին վրա կխաղա,
Թերևս հիմա կվազե հովերուն մեջ խոլարշավ,
Կամ սա դեմի բլուրեն հեծող սրինգն է հիմա,
Եվ կամ, թերևս ներշնչումս, որ այս գիշեր քեզ կուլա...։

Բանաստեղծը ունենում է նաև դժվարին պահեր։ Հոգեկան այդ ծանր ճգնաժամերին նա ասես մեկուսանում է բոլորից, պարփակվում իր «փղոսկրյա աշտարակում» («Աշտարակ»)։ Բայց ներքին հոգեկան անհավասար պայքարում նա ի վերջո հաղթահարում է այդ տրամադրությունները և դուրս գալիս դեպի բաց օդ («Կռվի երթ»)։

«Հրաշալի հարություն», ապա և հետագա ժողովածուներում Թեքեյանը ստեղծել է հայրենասիրական բանաստեղծությունների շարքեր։ Նրա ստեղծագործությունն այդ առումով առանձնապես սնունդ է ստանում հայ ժողովրդական ավանդություններից և առասպելներից։ Հետևելով Ալիշանի ավանդներին, բանաստեղծը «Հայրենի ղրույցներով» շարքը ստեղծել է իբրև հակադրություն իր ժամանակին, յուրովի բանաստեղծական հարություն տալով հարազատ ժողովրդի «երանելի պատմական անցյալին»։ Եվ դա ուներ իր քաղաքական լուրջ պատճառը. Համիդյան սոսկալի ռեակցիայի պայմաններում դժվար էր բա-

գեիբաց դիմել ժամանակակից թեմային։ Գրաքննությանը մոլորեցնելու համար բանաստեղծն ընտրում է պատմական զրույցի ձևը, որը միաժամանակ հայրենասիրական լիցք է պարունակում։

Բռնապետության դեմ պայքարի անհրաժեշտությամբ և ապագայի վառ հույսերի բռնկմամբ պետք է բացատրել «Հայրենի զրույցներով» շարքի հանդես գալը։ Թեքեյանի նպատակն այստեղ բնավ էլ անցյալի գործիչներին՝ Տրդատին, Վարազդատին և մյուսներին իդեալականացնելը չէ։ Նրա նպատակը ժողովրդի դարավոր հույսերի մասին խոսելը, ժողովրդի ազատության երազանքը անմար պահելն ու ոգևորելն է։ Այստեղ զրույցը այլաբանությամբ արդիականության է փոխարկվում։ Բանաստեղծը ժողովրդից վերցնում է զրույցի ձևը և այն հարմարեցնում իր մտքերին, նորովի նայում զրույցներին և նրանց հերոսներին։ Բնորոշ օրինակ է այս առումով Արտավազդի առասպելին տրված նոր մեկնաբանումը։ Թեքեյանը վերակենդանացնում է անցյալի հզոր անհատականություններին և նրանց ուժի ցուցադրումով հայությանը տոգորում ապրելու և մաքառելու տրամադրությամբ։ Նա դիմում է հարալեզների օգնությանը, որոնք հանդես են բերված իբրև մարդկանց նոր կյանքով ոգեշնչելու խորհրդանշաններ։

Նոր տիպի այս ռոմանտիզմը թելադրված էր կյանքի պահանջով։ Ժողովրդին պաշարած հիասթափությունը կործանարար կարող էր լինել նրա օրհասական պահերին։ Բանաստեղծությանն անհրաժեշտ էր հաղորդել քաղաքացիական պաթոս։ Դա ուրույն տիպի հայրենասիրություն էր, հայրենասիրության երազանք, որի մեջ չի մոռացվում վաղվա օրը։

«Արարատյան դաշտին մեջ» շարքն իր բնույթով «Հայրենի զրույցներով» շարքի անմիջական շարունակությունն է։ Եթե զրանցից առաջինը ժողովրդական բանահյուսության օրինակներով անցյալի հերոսական կերպարներն է ոգեկոչում, ինչ-որ նոր ռոմանտիկական փայլով, ապա երկրորդ շարքը իրականության կոնկրետ փաստի վրա է կառուցված։ Այստեղ խառնված են հերոսականն ու առօրեականը, վեհության կոթողների խորհրդանշումները և ավերակներն ու խեղճությունը։ Այս ձևով էր կառուցում Ալիշանը ժամանակակից կյանքին նվիրված իր գործերը։ Թեքեյանի հայացքը ևս, որքան էլ այն պարուրված լինի սիմվոլիստական ու ռոմանտիկական շղարշով, ոչ թե ետ, այլ առաջ է նայում։

1908—1914 թթ. շրջանում ավելի է լայնանում բանաստեղծի գեղարվեստական տեսադաշտը։ Նա ծանոթանում է նաև Արևելյան Հայաստանի վիճակին և իր շրջագայության անմիջական տպավորության տակ ստեղծում «Արարատյան դաշտին մեջ» շարքը։ Այստեղ ևս նա տեսնում է իր ժողովրդի վիճակը և տխրում։ Թեքեյանը տենչում է հարազատ ժողովրդի ազատությունը։ Մասիս, Հրազդան, Արագած անունների անմիջական շնչտումով հեղինակը ոգևորության է մղում ընթերցողին, հեռանկար տալիս նրան։ Այն, որ բանաստեղծն իրոք ապրում է ներկայի ձգտումներով, ցույց է տալիս «Լուսավորչի կանթեղը» ավանդության նրա մշակումը։ Ժողովրդական ավանդությունը պատմում է Արագածի կատարին կախված լույսի մասին, որ ժողովրդի անմահության խորհրդանիշն է։ Թեքեյանը ևս, ինչպես նրանից առաջ այդ ավանդությունը մշակող Հ. Հովհաննիսյանը և Հ. Թումանյանը, այն նույն ոգով է ըմբռնում։ Լավատեսական շնչով են գրված նաև «Զվարթնոց տաճա-

րին մեջ», «Հրազդան» և այլ բանաստեղծություններ։ Դրանք հայության վերածնության և հայրենասիրության իսկական նմուշներ են։

Թեքեյանը արևմտահայ այն փոքրաթիվ գործիչներից մեկն է, որ ազատվեց եղեռնից, ապրեց ու տեսավ առաջին համաշխարհային պատերազմը ու սկզբից ևեթ դատապարտեց այն, քանի որ նրանում տեսնում էր ժողովուրդների տառապանքները և ամենից ավելի՝ փոքր ժողովուրդների, որոնց տիպական օրինակն է հայ ժողովուրդը.

Խաղաղությո՛ւն արդ քեզի. սպանեցին զքեզ ալ,
Քե՛զ, որ հիմա կլողաս ճահիճներու մեջ արյան,
Խոշտանգըված, խողխողված՝ խեղճ փոքր հայու մը նման...

Թեքեյանը տեսավ արևմտահայ ժողովրդի բնաջնջումը, կոտորածներն ու տեղահանումը։ Այդ տարիներին նա սրտի կսկիծով գրել է. «Հայաստան չմնաց, հայուն հայրենիքին մեջ հայ չմնաց... Ահա իրողությունը՝ զոր հերքելու կամ թեթևցնելու բոլոր ճիգերդ ընդունայն կը մնան և որմե կը ծնին, որուն շուրջը կը դառնան նաև, անդուլ անընդհատ, բոլոր մտածումներդ, բոլոր խորհրդածություններդ» («Արև», 1915, № 62)։

Այս շրջանին է վերաբերում նաև Թեքեյանի «Կես գիշերեն մինչև արշալույս» նոր գիրքը, ուր արտացոլված է հայ ժողովրդի ապրած ողբերգությունը։ Ժողովածուն բացահայտում է բանաստեղծի հայրենասիրությունը նոր իրադրության մեջ, որը, անցնելով փորձության բովից, առավել ևս խտացնում է նրա կիրառած ողբերգական գույները։

Բանաստեղծությունների մեծ մասը դրված է կատարված դեպքերի գործած անմիջական ծանր տպավորության տակ։ Թեքեյանը տեսնում է սեփական ժողովրդի ծանր մաքառումը, նրա ըմբոստ պայքարի դրվագները, մարտնչում հայկական Սուետիայի՝ Մուսա լեռան բնակիչների կողքին («Սուետիա»)։

Թեքեյանը խորապես վերապրել է իր ժողովրդի կրած տառապանքի հոգեբանությունը, երգել է անտունի, պանդուխտի ծանր վիճակը օտար երկինքների տակ։ Նա իբրև բանաստեղծ լավ հասկանում էր, որ այդպիսի դաժան ժամանակներում իր կոչումն է լինել ժողովրդի հետ, սատար կանգնել նրան զոյատևելու համար։ Նա որբերի ու տնանկների պաշտպանն է նաև գրչով, նրանց վերքերին սպեղանի դնողը։

Երբ պատմական պայմանների թելադրանքով ստեղծվում և ընդարձակվում է հայկական սփյուռքը, սկսվում է Թեքեյանի ստեղծագործության նոր շրջանը։ Սփյուռքի առաջին խոշոր բանաստեղծը Թեքեյանն էր և նա էր հովանավորում, օգնության ձեռք մեկնում սփյուռքահայ գրողներին։ Վերջիններիս զգալի մասը պարտական է գրականության այդ նահապետին, որն իր խոսքով և հեղինակությամբ շատերին է գրական կյանքի ուղեգիր տվել։

Տեսած լինելով կյանքի աղետները և արհավիրքները, Թեքեյանը զգուշացնում է մարդկանց չխաբվել («Մեք խաբվեցանք, դուք չխաբվեք, ո՞վ ծառեր»)։ Նա քարոզում է ազգերի համերաշխություն, նրա խոսքը լեցուն է մարդասիրության մեծ զգացումով։

1933 թ. Փարիզում լույս է տեսնում Թեքեյանի «Սեր» ժողովածուն, որը մի նոր քայլ էր Սփյուռքի և ընդհանրապես հայ պոեզիայի մեջ։ Բանաստեղ-

ծը մաքառման կոչ է անում սփյուռքահայ ժողովրդի փրկության, նրա հոգու մաքրությունը պահելու, նրան սեփական գրից ու գրականությունից չօտարելու համար։ Նա մեծ մարդասեր է։ Այդ մարդասիրությունը նրա մոտ ծնվել է ծանր կորուստների գիտակցությունից։ Միայն տառապած մարդն էր ի վիճակի իմանալու մարդասիրության դինը։ Բանաստեղծը սիրում է կյանքը և այն ամենը, ինչ մարդկային է։

Հետագայում հրատարակած «Հայերգություն» մատյանը (1943 թ.) ընդգրկում է Թեքեյանի հայրենասիրական բանաստեղծությունները, այդ թվում և «Ներկա Հայաստանին» շարքը, ուր դրսևորված է նրա անսահման նվիրվածությունը իր մայր հայրենիքին։ Բանաստեղծը հեռվից-հեռու տեսնում և զգում է իրական Հայաստանը և բարձր ոգևորության պահեր ապրում նրա գոյության փաստով.

Տարբեր ես դուն մեր երազեն.— ավելի լավ...

Երազ և իրականություն հարաբերության մեջ բանաստեղծն իրավամբ առավելությունը տալիս է իրականությանը։

Երբ սովետական բանակները ջախջախում էին ֆաշիստական բարբարոսներին, Թեքեյանը Կահիրեի սովետական դեսպանատանը, հայության անունից կարդաց «Հայաստանը Ռուսաստանին» ֆրանսերեն բանաստեղծությունը, ուր նա փառաբանության խոսքեր էր ուղղում ռուս ժողովրդին, որը աշխարհասասան դոտեմարտում, այլ ժողովուրդների թվում, օգնում էր և հայ ժողովրդին։

1945 թ. լույս տեսավ Թեքեյանի «Տաղարան» հատորը։ Նա գրել է նաև արձակ գործեր, քրոնիկներ, պատմվածքներ, այդ թվում՝ «Ճահիլը» և «Խարույկը» պատմվածքները, «Մարք Ֆուրթունի արկածը» վիպակը, «Եթե տերը կամենա» վեպը։ Հիշված գործերում նա առանձին ուշադրություն է դարձնում հայ ժողովրդի աղատագրական պայքարի դրվագներին։

Թեքեյանը սքանչելի թարգմանություններ է կատարել եվրոպական մեծ բանաստեղծներից։ Նա թարգմանել է Շեքսպիրի 22 սոնետները, Ռոնսարի, Հյուգոյի, Բոդլերի, Վերլենի, Արագոնի և ուրիշների մի շարք գործերը, գրել բազմաթիվ հոդվածներ դպրոցի, կրթության, կրոնի, քաղաքականության, արվեստի, գրականության հարցերի մասին, ինչպես նաև հուշագրություններ։ Թեքեյանը սոնետի մեծագույն վարպետներից մեկն է հայ պոեզիայի մեջ։ Նա հայ պոեզիան հարստացրել է նոր արտահայտչամիջոցներով։

Բանաստեղծը լայն կապերի մեջ է եղել հայ գրողների՝ Վարուժանի, Սիամանթոյի, Թումանյանի, Իսահակյանի, Չոպանյանի և ուրիշների հետ։ Նրա բարերար աղդեցությամբ են ստեղծագործել Լ. Սյուրմելյանը, Վահե-Վահյանը, Ժ. Հակոբյանը և ուրիշներ։

Թեքեյանը վախճանվեց 1945 թ. Կահիրեում։ Նրա մահից հետո Կահիրեում լույս տեսան նրա «Ամբողջական երկերը»։ Մեղանում ևս երկու անգամ հրատարակվել են բանաստեղծի ստեղծագործությունների ժողովածուները։

ВААН ТЕКЕЯН

(К 100-летию со дня рождения)

Л. А. АСМАРЯН

(Резюме)

Видный армянский поэт, публицист и общественный деятель Ваан Текеян (1878—1945) родился в Константинополе, многие годы жил и работал в Европе и Египте. Он редактировал армянские периодические издания «Ширак», «Арев» и др., преподавал в зарубежных армянских учебных заведениях, был одним из деятелей партии «рамкавар».

В 1902 г. вышел первый сборник стихов Текеяна, в котором преобладает настроение одиночества, свойственное поэзии символистов. В 1911 г. издается второй сборник—«Чудесное воскресение», ставший значительным явлением в армянской поэзии. Воспевая любовь и природу, автор одновременно протестует против гнетущей действительности. Из армянского фольклора и повседневной жизни он заимствует патриотические сюжеты. В последующих произведениях («От полуночи до рассвета», «Любовь», «Армянское песнопение») Текеян обращается к темам геноцида западных армян, жизни армянских беженцев вдали от родины. Перу Текеяна принадлежат также рассказы, роман, повесть, публицистические и литературные статьи, переводы из западноевропейских поэтов.